

կրթիչ ձեռքի հպատակելու, սակայն ամէն որ ձեռնուած է այս կամ այն գաղափարի բանի համար: Մայրն էլ նրան երկիւղ պատճառելու համար հազար ու մի նախապաշարումներով լցնում է գլուխը: Զորս տարեկան հասակում արդէն նա հասազ է լինում, և հետզհետէ մեծանալով՝ աղան հօրը, աղջիկը մօրն է ոգնում: Տղան հօրը ոգնելով, սովորում է հառազութիւն, սալապանութիւն և գութան քշել, իսկ աղջիկը մօրից սովորում է գուլպայ գործել և կար անել: Կերակուր եփել, իւղ հարել, պանիր շինել և այլն նա սովորում է հարս ժամանակ կենսութիւնը:

Դպրոց լաւախոզ երեխաների թիւը շատ փոքր է և ժողովուրդն էլ գեաւ լաւ չէ ըմբռնել ուսման կարեւորութիւնը ¹⁾:

ԸՆԾԱՆԻՔԻ ԿԵՆՏՐՈՆ.

Ընտանիքի մէջ ամենից աւելի յարգանք, սէր վայելում է մայրը, նրան կամ նրա միջնորդութեանն են դիմում թէ որդիներն և թէ հարսերը: Սակայն հայրն աւելի ակնածութիւն է ազգում. մօրը սիրում են, հօրից վախենում, քաշւում: Մայրը գլխաւորապէս հրամայում է իւր սիրով, իսկ հայրը հեղինակութեամբ, վախով: Նոյն իսկ մայրը երկիւղ է առաջ արգիներին հօր անունով, երբ սրանք չեն ուզում իրեն լսել:

Հայրն ու մայրը ծերանալով, հետզհետէ կորցնում են իրենց թէ իշխանութիւնը և թէ սաացած յարգանքը:

Նոյն իսկ որդիները սրտանց չեն սիրում իրենց ծերացած ծնողներին, սակայն հաւատալով թէ ինչ որ անեն իրենք իրենց ծնողներին, նոյնն ստանալու են իրենց որդիներից, ալդ պատճառով պատւում և յարգանքով են վարւում նրանց հետ:

Աւանդութիւնն ասում է, թէ մինը իւր ծերացած հօրը քիթոցի մէջ դրել տարել է ժայռի գլխից վայր գլորելու: Հայրըն ասել է թէ քիթոցից հանիլ և այնպէս գլորիլ: Եւ երբ որդին հարցրել է պատճառը՝ ծերունին պատասխանել է. «Որ-

¹⁾ Ճեղք որովհետ պատճառով յետնդում ենք զատախ մեկնական և ժողովրդական բոլոր խաչերի մեծամասն նկարագրութիւնը:

պէտզի քո որդիդ էլ քեզ այդ քթոցով դուրե, ինչպէս և ես իմ Հօրս եմ գրեցել: Որդին զոչում և այնուհետեւ յարգանքով է վարուած իւր Հօր Հետ:

Բայց և այնպէս՝ թէ Հանգէսներին, թէ Հասարակական ժողովներին, եթէ նրանք մասնակցեն, թէ Հօգու Հացին և թէ եկեղեցում՝ առաջին տեղը, օճիթի գլուխը՝ և առաջին բաժինը նրանց է պատկանում:

Ազգակցութեան մէջ սրտում են հետեւեալ առթեանները.

Հօրեղբայր, որին կոչում են պիեկամի, մեկեամի, էամի, փաշա, աացու (եթէ կարգաւ գիտէ):

Մօրեղբայր, որին կոչում են քեռի:

Հօրեկոր կին, որին կոչում են հօգորկին՝ տաքների հետ խօսելիս, իսկ իրեն տնտեսում են՝ հարս ապա, խանում ապա, շաքար ապա:

Մօրեկոր կին—քեռեկին.

Հօրաքոյր—հօրքուր:

Մօրաքոյր—մօրքուր.

Հօրեկոր որդի.

Մօրեկոր որդի.

Հօրաքոյր որդի.

Մօրաքոյր որդի.

Եղբօր որդի.

Քեռորդի—եղեան.

Խնամուկ—հարսի կամ փեսայի ծնողները.

Մեեր—կնոջ հայրը.

Ջոնքանի—կնոջ մայրը.

Ներսար—ամուսնու հայրը.

Նետար—ամուսնու մայրը.

Մեերնազ—կնոջ եղբայրը.

Ցազը—ամուսնու եղբայրը.

Քենի—կնոջ քոյրը.

Ցալ—ամուսնու քոյրը.

Ցագեթիկիկ—ամուսնու եղբօր կինը.

Քենեկալ—կնոջ քրոջ ամուսինը.

Հարսի համար ամուսնու ազգականները կոչում են կերտանք, իսկ փեսի համար հարսի ազգականները՝ աներանք:

Ամուսիններին առհասարակ կոչում են մարդ ու կնիկ: Նինք ա-մուսնու մասին խօսելիս կեսուրոջ առաջ կոչում է նրան՝ ազագ. տե-

քերկնկանը՝ տաղրդ, ապին՝ ախպարդ, օտարներին՝ մարդս, զլիաւ-
րապէս փեսաց, ախպարդ. ամուսնուն՝ ինչ որ իւր կամ տան տղան
կոչում է՝ ազայ, փաշա, օփար, էամի, կատաշ, բայց առտուլապէս՝ ծօ՝

Ամուսինը կնոջը կոչում է՝ իւր հօրը, մօրը, հօրեղբորը, եղբորը
և ուրիշների առաջ՝ հարսը, աներոյ՝ և զտեղանջի առաջ՝ աղջիկդ, տա-
րների առաջ՝ մեր Քիւլթէօքեանը ¹⁾, Նշանածս, կնոջ հետ՝ բխշի:

Գերգաստանի անգամների յարարերութիւնները շատ ան-
նախանձելի են: Բաւական է, կարծեմ, առաջ բերել չհարս և
կեսուրս ²⁾ պատկերի միջից այն տղերքը, որով նկարագրում
է հարսը իւր շրջապատողներին. նա ասում է՝

Գերսար, կերսար,

Էրկիթէ մամար:

Կեսուր, կեսուր,

Քարէ մասուր:

Ցաքեր կնիկ,

Օձի բնիկ:

Ցալիկ, ապիկ,

Սև սև սալիկ:

Ցաքրիկ, տաղրիկ,

Գալ՝ աղբրիկ:

Այսպէս ուրեմն, ամբողջ գերգաստան մէջ ամենասիրե-
լին հարսի համար, ամուսնուց յետոյ, տեղքն է. կերսարը եր-
կաթէ մամարի (մեխ) նման ամուր է իւր իշխանութեան մէջ,
կեսուրը՝ քարէ մասուրի պէս անգուլթ, ինչքան կուզէ լիզէ, ոչ-
ինչ չի տալ, տեղերկնիկը՝ օձի բնի պէս որոգայթից բնակա-
րան, որովհետև տաղերկնիկը՝ տաղերկնիկան ամէն գիշութենը
կուզէ, մէ գէշ եարս հանելը չի ուզէ, լիւնքի հետը հաց
կուտէ:

Սակայն հարսը զատապարտուած է և լռութեան. նա հարս-
նութիւն է անում—չի խօսում—կեսուրի հետ 3, կերսարի
հետ 10—12, տեղերկնիկների հետ մինչև մի, տեղրի հետ 15,
և կնքաւորի հետ 25—30 տարի, մինչև անգամ մինչև մահ.
գեռ սրա գունդն անգամ չի անցնում՝ ստատիկ մեղք համա-
րելով այդ: Աւանդութիւնն ասում է, թէ մի հարս անցել է

¹⁾ Բազապէս Գիւլթէօքեան, որ սահմաններն Նշանափում է Հարզթափդ, բա-
նաթաղ անելով դուռն է Քիւլթէօքեան պարկըն մօտիք Թափու:

²⁾ Նա չկատարի բարձունքս:

քաւորի երգիկից և նրա հետքը մնացել է երկնքում, որ այժմ կայւում է առանձնօր քաշչ—լարդ գողի ճանապարհ:

Բարեբախտաբար տան մշտական աշխատանքը սովորութեան իրաւունքով բաժանուած է, ապա թէ ոչ անտանելի կը լինէր միմեանց հետ ապրել:

Այսպէս վազեմի սովորութիւնով՝ կեսուրը հաց և կերակուր է եփում:

Մեծ հարսը գրանկում է հացը—տրանա կը հացը և օգնում կեսուրին՝ կերակուր եփելու:

Երկրորդ հարսը կովերն է կթում, խնոցի հարում:

Նրբորդ հարսն աման է լուանում և թանիրը վառում:

Չորրորդ հարսը հաց շաղախում, տեղեր ցկում, ժողովում, առն ու տեղ աւելում:

Տան աղջիկն էլ ջուր է բերում:

Մի փառքիկ զանցառութիւն պարտականութեան և կեսուրը կ'սկսի խոսել, անիծել հարսին, ծաղրել, հայհոյել հարսի ծնողներին, իբր թէ նրանք վատ են կրթել աղջկան և այլն: Հարսը պարտաւոր է լսելեան տանել կեսուրի խոսքերը և շատ շատ՝ լսելեան արտասուել իւր վիճակի վերայ: Բայց երբ տարիներ անցնելուց լսող հարսի համբերութիւնը հասնում է և վատահանում է կեսուրին պատասխան տալ, այն ժամանակ վերջինս զանգաւում է իւր որդիներին, ամբաստանելով հարսերին ոչ միայն արածի, այլ և հազար ու մէկ չարածի մէջ, որոնք հաւատալով մօրը, միեւնոյն ժամանակ իրենց աղամարդութիւնը ցոյց տալու համար ծեծում են կանանցը: Եւ հէնց այս պատճառով տարուի զոգասանք երգի մէջ առում է.

Հին անկնով թէզ կը լսես,

Մառնիկա իբար կը քսես,

Մուս ու գորթ մանկերուս կքսես.

Եւծել կուտաս, մի դաւ պառաս:

Ուկայն երբեմն էլ հարսերը իրենք են կռվում կեսուրի հետ. այսպէս օրինակ.

Եթէ կեսուրը հարսերից մինին աւելի սիրէ և նրան քիչ աշխատեցնէ, միւսները իրենց ամուսինների տփօրը լցնում—

սխալակցեցնում և առաւելապէս նրանց են կռուեցնում կեսուրի Հեա:

Եթէ կեսուրը հարսի արածին յանախ չի հաւանում և ինքը նորից է անում, հարսն այլ ևս չի համբերում և ասում է, թէ եթէ ամեն արածիս չլէտք է հաւանիս՝ մի անիլ տար, վերցրու ինքդ արա՛: Սրանից և ծագում է կռիւ:

Սակայն ամենից շատ կուում են տեղերկնիկները և այդ առաւելապէս Հեաեեալ պատճառներով:

Երբ մինը զլանում է կատարել իւր պարտականութիւնը, մանաւանդ եթէ նկատելիս էլ՝ դիմադարձութիւն է անում:

Երբ քիչ որդիներ ունեցողը քիչ է աշխատում և դիմադարձութիւն է անում, թէ այսքանն էլ հերիք է, քինչս կուտէ:

Երբ մինը կամ երկուսը միայնակ մեաւով տանը՝ ծածուկ տան բարիքներից ցորեն, իւզ, պանիր, հաւկիթ և այլն աալիս միւրդ կամ շոր են աւելում իրենց համար և յայտնում է:

Երբ մինը միւսի բրթից, կտորից, թելից, թաշկինակներից, սոկիներից գողանում է և բանում է: Յաճախ գողացած իրը տեղերկնիկներն ուղարկում են իրենց մարանց, որոնք ձեռ փոխելով՝ այսինքն՝ եթէ թել է՝ գուլբայ գործում, եթէ կըտոր՝ հանգերձ կարում և ընծայ բերում իրենց ազգկան:

Երբ միին կամ նրա որդուն կերսանքը մի բան աւելի անեն:

Երբ միին երեխային կերակուր են տալիս և միւսներին չեն տալիս:

Երբ միին իւր որդու հանգերձին կարկատան է ձգում և այդ կարկատանից միւսների որդիներին բաժին չէ հանում:

Երբ մինը աղայ չունի և հախառակ նրա պահանջի՝ ամէն բանի մեծ, խառ բաժինը նրան չեն տալիս: Միւսների երեխաներին արած հանգերձի գէժ իրեն փող չեն տալիս:

Երբ ճաշի ժամանակ միին, սովորաբար փոքրին, գործի են գնում, և չապասելով ուտում պրծնում են կերակուրը: Վերջինս խռովում և կուում է նրանց Հեա:

Երբ մինը չի ուզում արաք գնալ և պահանջում է որ միւսը գնայ: Ուսպիսի գէպքերում ամուսինը ծեծում է սրան:

Նրբ մինը զանգառում է գրկիցներին անգերկնիկներից և իմացում է:

Սովորաբար անգերկնիկները կուռելիս հայհայում են միմեանց. ճնհերը... մարդ մացին... և այլն. և միմեանց զաղտնիք գուրս առում. Նրբեմն էլ ծեծկում են, հանկուտում են միմեանց երես և քաշում միմեանց մազեր:

Կինն ազատ չէ մինչև անգամ և ամուսնու բանաթիւնից: Սա իւր ազամարգութիւնը ցոյց առնու համար ոչ միայն օտարների առաջ հայհայում է նրան, այլ և ծեծում և այս առաւելապէս:

Նրբ կասկածում է թէ կինը սիրոյ է անում, ուրիշին սիրում է, և սրա համար միշտ սոկիներ գնում, խոս է հագնում:

Նրբ կնոջը մեղադրում է թէ պարտուել ինչք այս ինչի ձեռքը բռնեցիր, սխմեցիր, ինչու գուրս ելար հալլն և կինը սրա դէմ խոսում է:

Նրբ պարտատէրը պարտքը պահանջում է և սա լանդիմանելով կնոջը, մանաւանդ եթէ նա երկրորդն է, թէ ինչք այնքան փող պահանջեցիր, որ պարտքի տակ ընկայ, արնքազնի մի մասն աւելում է պարտքը վճարելու և սա ոչ միայն չի տալիս, այլ և գիմազարձութիւն է անում:

Նրբ ուրիշները բամբասում են կնոջը հալլն հալլն:

Նախնի բարոյականութիւնը գծբախտաբար այժմ անհետացել է, և անբարոյականութիւնը հետզհետե տարածւում է. բայց և այնպէս՝ այս ժողովուրդը բարոյապէս բարձր է կանգնած Ախալցխայի և Աղեքսանդրապոլի ժողովուրդներից:

Սակայն գաւառիս բնակիչների մէջ անբարոյականութիւնով աւելի աչքի են ընկնում Արտահանի զաղթականները, որոնց մէջ մի ժամանակ սաստիկ տարածուած էր զկաթն ախալերութիւնը: Հարս և երիտասարդ կտրում են իրենց մատները և արիւնը միմեանց խառնում կամ Ձառկին միմեանց սղջոյն են տալիս և զուլպայ, պաշմախ միմեանց նուիրում, արալխով քուր ու ախալէր են լինում և ազատ մուտք ունենում միմեանց տուն: Կասկածանքից և հետեւողութիւնից ա-

զատ՝ որանք շատ շուտով գուրս են գալիս բարոյականութեան նաեւադարձից։

Այսպէս, օրինակ, Փոկա գիւղում Կուրդին անուն մէկը սիրում է Գիւլֆէրի էքսըքը, որի օրինաւոր տմուսինն երեք տարուց յետոյ անյայտ ձեռքերից խեղդւում է իւր սեփական տանը։ Կուրդինը տանում է Գիւլֆէրուն իւր տունը, իւր օրինաւոր կնոջ մօտ, որը չհամբերելով գնում է իւր հօրանց տուն։ Գիւլֆէրին սիրում է Կուրդինին ու իւր միւս ախպորը, և գուցէ ուրիշ շատ ախպարներին էլ, եթէ Կուրդինի օրինաւոր կնոջ եղբայրները չտպանէին նրան։ Այժմ դրանք, Կուրդինի տներն ազերը, բանգարկուած են։

Բուր ախպէրութիւնն այժմ գրեթէ վերջացել է։

Երգրումի զաղթականների մէջ անբարոյականութիւնով առաւելապէս յայտնի են՝ Չանգուրեցիք, Դիլիսկեցիք, Կարծախցիք, Վալիանցիք, Սաթխացիք։

Բարոյականութեան անկման պատճառները, բացի արնաեռականից, գլխաւորապէս հետեւեալներն են.

Վերջին պատերազմին գիւղերում և քաղաքում բնակող զօրքը՝

Քաղաքացիներն իրենց կիրքն յագեցնում են շրջակայ մօտիկ գիւղերում՝ Չանգուրա, Վալիան, Սաթխա, Եշտիա և այլն, գիծելով պառաւ շիջնորդս կանանց, որոնց տունը շատ անգամ ծառայում է ժամադրութեան տեղի։

Քաղաքի սրկիաները քաւոր են լինում գիւղերում և շաբաթներով բնակում այնտեղ։

Մանրավաճառներն (լարլի) ազատ մտնելով գրեթէ ամենի տունը, ոչ միայն մօլորեցնում են հարսերին, այլ և նրանց գողանալ են տալիս տան բարեքներից կարագ, ցորեն, գարի, հաւկիթ, ալիւր և այլն։

Սափրիչները պալմանաւորուած լինելով երկու շաբաթը մի անգամ գնալ գիւղ և այլ մարդկանց միրուքները սափրել, մագերը խուզել, գրեթէ համարձակ մանում են բոլորի աները և մօլորեցնում հարսերին։

Գիւղերում մի տեսակ ազամարդութիւն է համարւում

Հարս սիրելիք, և մի քանի գիւղերում, որ. Կարծախ, Սաթխա գրեթէ բոլորը միմեանց Հարս են սիրում:

Իրենք Հարսերն էլ իրենց կողմից նպաստում են անբարոյականութեան տարածման, 'ի վրէժ սիրուհի պաշոյ ամուսնուն, իրենք էլ ուրիշներին սիրելով, և կամ ամուսնու կողմութիւնից զգուած կամ ուրիշներին մրցելից ու փողից շնացած՝ Հեռեւում են ամիջնորդ պառաւանքի» խարհրդին:

Երբ մի մարդ ուզում է մի Հարսի ձեռք ձգել, մի աւանձին տեղ մի ինձոր է ձգում նրան, եթէ Հարսը վերցընում է այն, մարդը մտեւնում և ժամագիր է լինում, իսկ եթէ չի վերցնում, նշանակում է կամք չունի: Պէտք է նորից փորձել՝ պար տուել ձեռքը սեղմել, բուռը քերել, արտի ճանապարհին սիրոյ խօսքեր ղթապլել» և այլն:

Եթէ Հարսը մինի վերայ այք ունի, աւանձին տեսնելիս արհամարհական ձեռք տաւում է. լինի՝ մուստուն (կինգ) Բնչ է որ դուն առեր էս:

— Ե Բնչ է նեմ, պատասխանում է մարդը:

Ընչ պըտի էնես, վայլահա, ասում է Հարսը և Հեռանում: Մարդը Հասկանում է և պատում է լեռակից, մի աւանձին տեղ մտեւնում է նրան և ուղղակի ասում. Ընս քեզի գուզեմ, դուն ա ինձի գուզես:

Եթէ Համաձայնութիւն կայանում է՝ որոշում են թէ որ փոքրիկ աղջկայ կամ մարդու միջոցով կարող են միմեանց կանչել, ուր գնեն մի քար, որի մի երեսը պիտի նշանակէր թէ սիրահարը կարող է գնալ Հարսի տունը և միւսը չի կարող և թէ Հարսն արար Հաց տանելիս որ քաշում սպասէ սիրահարին:

Ուխտագնացութեան օրերից մի քանի օր առաջ սիրողը սովորեցնում է սիրուհուն, խոստանալ գնալ այս ինչ ուխտը, միայն առանց ամուսնի, միայնակ: Այնտեղ իջնել այս ինչ անձանոթ մարդու տունը, ուր և իջած կը լինի ինքը և կը ներկայանալ որպէս նրա ամուսինը:

Օտար գիւղից բերած Հարսը երբ իջեցնում են ազգականներից մինի տունը, երկատարդները տանեցիներէջ մինի

միջնորդութիւնով ծանօթանում են Հարսի Հետ իրենց ազգական ջոյց տալով, գրաւում են քէրը և ամուսնութիւնից յետոյ սիրում:

Հարս դարձ ասնելիս երբեմն Հեռու ազգականն (կանաղով) է տանում, որ ճանապարհին մոլորեցնում է Հարսին և ապա շարունակում:

Պէտք է ասել, ընդհանրապէս, որ աղջիկները սաստիկ բարոյական են, սրովհետեւ ժողովուրդը ահագին նշանակութիւն է տալիս գրան: Անբարոյականութեան մէջ բռնուած աղջիկը, եթէ չի կարողանում ստիպել իրեն մոլորեցնողին ամուսնանալ իւր Հետ, երբեք չի կարողանում մի արժանաւոր ամուսին գտնել: Եւ մինչև անգամ եթէ նորահարս անմեղութիւնն իւր ապացոյցը չէ ունենում, վերջինս սաստիկ և շարունակ նախատում է ոչ միայն ամուսնուց և ազգականներից, այլ և ամբողջ գիւղից:

Ժողովուրդը դատաւարտում է և մոլորեցնող երիտասարդին և հագիւ է պատահում, որ պատուաւոր անից նրան աղջիկ տալին: Ուստի և սրանց սիրահարութիւնն սկսում և վերջանում է զուեղանալով—սիրախոսութիւնով ու համբոյրով: Եւ միայն այն գէպքում, երբ երիտասարդը կասկածում է, թէ մի գուցէ աղջիկը չամուսնանալ իւր Հետ և կամ ծնողները չտան, մեղանշում է նրա գէմ, որով կատարելապէս ապահովւում է, որովհետեւ այսպիսի գէպքերում աղջիկներն ասում են. «Աւա՛հ Հետ որ անունս յելու, անոր Հետ ա թող Հագիւ ելլէ»:

Եւստ անգամ յիշեցնելով այդ տխուր ապագան, ծնողները բաւական ազատութիւն են տալիս աղջիկներին գնալու ուժ տուն որ կամենան, համարձակ խօսելու, երգելու և պարելու երիտասարդների Հետ, միայնակ գնալու աղբիւրը, արոք, սարերը դմի, ծաղիկ ժողովելու և այլն, մինչդեռ Հարսերը բոլորովին զրկուած են այդ ազատութիւնից, նրանք իրաւունք չունին երիտասարդների Հետ խօսելու, միայնակ այս կամ այն տունը գնալու և այլն:

Երիտասարդները աղջիկների սիրտը գրաւելու համար աշխատում են կարելուայն շափ վայելուչ հագնուել, ամեկուք ման-

գալ, լաւ գօտեմարտել, ճիշիթ խաղալ, պարի մէջ լաւ շարտալ ու քաղցր երգել, լաւ ընկերներ ունենալ և այլն:

Աղջիկներն երիտասարդներին դուր գալու համար բացի այն որ հազնում, կոկում, մազերը գեղեցիկ Հիւսում և Հըլուններով զարդարում են, այլ և զբալաններում գնում են մեխակ (զարանֆիլ), սերկեիլ, խնձոր, ընկոյզ և այլն, բերքններում պահում են զարանֆիլ, շապկի տակից վզի վրայ կապում նոյնպէս զարանֆիլ, որ, իբր, անուշահոտութիւն բուրէ: Պար տունն ինչքան կարելի է լաւ են շորորում, երգում, խօսում և այլն:

Աւհասարակ աղայ և աղջիկ միմեանց տեսնում և տէր են կապումս—տիրահարում են հետեւեալ տեղերում.

ա. Եկեղեցում.—Թէ ժամերգութեան սկսուելիս և թէ մանաւանդ աւարաուելիս երիտասարդները խմբով կանգնում են եկեղեցու գաւթում և նստում աղջիկներին:

բ. Պար տունը. Հարսանիքներին և մէկ էլ բարեկեանդանին հասարակաց սիւսըս պար է լինում, որին գրեթէ բոլոր գիւղացիներն առանց հրաւիրուելու ազատօրէն մասնակցում են: Այստեղ մի լապտերի աղօտ լուսի տակ մի քանի հարիւր հոգի համախմբուած ասում, խօսում, պարում են: Երիտասարդներն աղջիկների ձեռքը բռնած պարում են և եթէ հաւանում են միմեանց, սեղմում են իրար ձեռք, աղան միրգ է տալիս աղջկան և այլն:

գ. Դերիներում. Երիտասարդները գօտեմարտի, ճիշիթի մէջ ցոյց տալով իրենց բոլոր արժանաւորութիւնները, բըռնում են աղջիկների ձեռքը և երգելով պարում: Գնաների մի թեթեւ սեղմումն բաւական է զգացմունքների փոխանցման համար:

դ. Աղբիւրի մօտ. Ջուր բերելու պարտականութիւնն աղջիկների, նորահարսերի և երիտասարդներինն է: Սրանք վաղ արշալուսին և ուշ վերջնալուսին, երբ բնութիւնն ինքն իւր գեղեցկութեամբ սէր է ներշնչում, գնում են աղբիւրը կամ առուակը ջուր տանելու: Թէ ճանապարհին և թէ մանաւանդ աղբիւրի մօտ սրանք կանգնած երկար խօսում

են, ճիճազում, միմեանց մատանի, միբո, թաշկինակ տալիս: Ետտ անգամ, երբ աղջիկը սափորը ձեռին կանգնած է լինում ազդիւրի մօտ, երիտասարդ սիրահարը հանգիստեաց բլուրից հշիցնում է իւր սիրոյ երգը. որին երբեմն պատասխանում է աղջիկը ¹⁾:

Ե. Աղջիկն օրաւ գնալիս և գալիս երիտասարդները գրնում են առջևից քաշքաշուելով, իրար խփելով, գետեմարտելով, ինչ է իրենց շնորհքը. ոյժը ցոյց տան նրան և նրա սէրը գրբաւեն: Եթէ հասել են նպատակին, աղալ ու աղջիկ նստում են մի փոսի մէջ և երիտասարդի բերած միրգը ուտում, շաւենդում: Ղուկում: Դուկում: Երբ հասնում են սիրուելը զուկում: Երբ հասնում են մեացել: Երբ հասնում են մեացել:

Գ. Երիշտու տունը. Երիշտու անոգը հաւաքում է 8—10 աղջիկ երիշտան կոխելու և ջարդելու: Սրանք բոքիկանում են, իրար ձեռքից ամուր բռնում, երգում և երգի տակ տով երիշտան կոխկրտում: Երիտասարդները հաւաքում են հերթիկը և այդ տեղից նայում նրանց²⁾ և լսում նրանց երգը: Երբեմն էլ թողնում են նրանց մասնակցելու երիշտան կոխկրտելուն և մանաւանդ կտրելուն: Դնում են խոնշաներ և շուրջը բուրբուրում ու կտրում:

¹⁾ Առաջ թեկնք թիւարար զեղեքից մը. Դանեա Յեփան-Յեփան—տեւան մի երիտասարդ տատաւ փաղ որսի է գնացել. երբ գտարտաւել է խփել մի թռչուն, յանկարծ առ թռչում է, Յեփանը նայում է յետ, տեսնում աղբիւրի առջի մի աղջիկ կանգնած, որ և թռչել էր թռչունը: Յանկարծ դրա սիրուն է զարնում, հրաշքեր աղ տեսնում և երգում, զգալովորար թռչունը լիւրով, որի հետ տեսնում երգիչիւրանին հիւսել է աղ աղբիւրի մօտ կանգնած մի աղջիկ երգը: Աղա գնում է մօտը, միմեանց բացաղբում իրենց սէրը, փոխում են մատակները և մատակի լինում միշտ այդանգ տեսնելու:

Յեփանը երեք տարի սիրահարում է մում և միշտ՝ ցերեկ աղբիւրի մօտ, զիւրեք նրանց զանկն ու երգիկը լսելով՝ երգում: Յանի՝ քանի՝ անգամ ուղում է աղջիկը, բայց սրովեան ինքը մի աղբում մամուրի որդի է եղել, չեն տալիս նրիւ անգամ փոքում են փախցնել, ապա չեն կարողանում, սրովեան աղջիկան զիւրեքները լսելով կաղում են տեսնել: Ղեկիւրիւ աղջիկանը նշանում են Բաղիւրի շահեանայի որդու հետ: Այս որ խմում է Յեփանը, չի հասնում, և գնում նրանց հերթիկից նայում է: Երբ տեսնում է իւր ախարանին յաղթանակով կանգնած Բահուր մօտ, զիւրեք է տեսնում և ուշաթափում: Երբ անոգը մարմնը տեսնում է: Երբեքնը տեսնում են տեսնում, որ տատիկ հիւանդանում է: Մահամեքն՝ աղալում է կանկնի Բահուրան, մեա բարե տեսնում, և երբ այդ ևս թալլ չեն տալիս աղջիկայ երեքները, կանկն է տալիս Բահուր: աղբիւրի նման աղբ ունեցող մի աղջիկ, համբարում աղբը և աղբին տանգում:

Երկաստարգը խոնջի տակից տալիս է իւր ուղածին բերած միւրգը: Սա առնում և ծածուկ տալիս է միջնորդ ընկերուհուն, որ ցոյց է տալիս իրեն և ասում, թէ ժայլըն է տուել: Ապա յայտնի կերպով միասին ուտում են:

է. Ծաղկոցին. Ազջիկները հաւաքւում են և հարսին տնէ տուն ման տծում, երկաստարգներն էլ խմբով հետևում են նրանց:

ը. Համբարձման. Երբ գնում են սարերը ծաղիկ քաղելու և երբ վիճակ են հանում:

թ. Չալիբները. Ղմի, ժախ և այլն հաւաքելու գնալիս:

ժ. Զրազացում, ուր գնում են ազջիկները կորկոտ աղալու:

ժբ. Նոր և կանանչ կիրակիներին, երբ գնում են սկանանչ կոխելու—գրօսնելու և այլն:

Սիրահարը միջնորդ է գտնում ազջկան ազգականներից կամ ընկերուհիներից միեին և նրա միջոցով գրաւում ազջկայ սիրտը, մատանի, թաշկինակ ուղարկում և այլն: Միւրդ է տալիս միջնորդին, որ կէսն ինքը ուտէ, կէսն էլ նրան տանի: Երբ սրանք սիրում են միմեանց, իրենք միջնորդ են լինում միջնորդ ազջկայ համար, և երբ գտնում են նրա համար ևս սիրեկան, չորսը միասին գնում են արտերը սիրուելու:

Բայց աւելի նրանք սիրւում են եղլաօրէիին: Ազջիկներն, իւրաքանչիւրն իւր տանից, առնելով իւր, պանիր, հաւկիթ, հաց և այլն, միասին գնում են գիւղից գուքս մի բլուր կամ ժայռ: Այստեղ, խաղալով ու երգելով եփում են կերակրներ և տանում քաբերի տակն իրենց հրաւիրով եկած՝ թաք կացած սիրեկանների հետ ուտում ու զուներում:

